



«NAIRI SPORT» ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Խմբագրություն՝ խմբ. ՆՍ01
(Ակտիվի դաս՝ հրապարակային)

1. ԾՐԱԳՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

«NAIRI SPORT»-ն առաջարկում է դժբախտ պատահարներից ապահովագրություն սպորտով զբաղվող 6-55 /ներառյալ/ տարեկան անձանց համար:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂ ԱՆՁԻՔ

Ծրագրի շրջանակներում կարող են ապահովագրվել՝

- Մարզական դպրոցների աշակերտները
- Մարզիկները, ովքեր մասնակցում են մրցումների կամ սահմանված գրաֆիկով հաճախում են մարզական պարապմունքների
- Պրոֆեսիոնալ մարզիկները, ում համար սպորտը եկամտի հիմնական աղբյուրն է
- Մարզիչները

3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹ

Ծրագիրը ընձեռնում է ապահովագրական պաշտպանություն՝

- Մարզական պարապմունքների ընթացքում
- Մարզական մրցումների ընթացքում
- Մարզական միջոցառումների ընթացքում՝
 - ՀՀ և ԼՂՀ տարածքում անցկացվող
 - Արտերկրում անցկացվող

4. ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂ ՌԻՍԿԵՐ

«NAIRI SPORT»-ի շնորհիվ մարզիկն ապահովագրված է դժբախտ պատահարի արդյունքում առաջացած հետևյալ ռիսկերից՝

- *մարմնական վնասվածքներ և կոտրվածքներ*
- *աշխատունակության մշտական կորուստ*
- *Մահ*

Ապահովագրական հատուցումներն իրականացվում են հետևյալ սահմանաչափերով՝

- *մարմնական վնասվածքների և կոտրվածքների դեպքում՝ բժշկի ցուցումով փաստացի կատարված բժշկական ծախսերի չափով, բայց ոչ ավել, քան ապահովագրական գումարի 50%-ը*



- Հաշմանդամության 1-ին խմբի ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 100%-ի չափով,
- Հաշմանդամության 2-րդ խմբի ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 75%-ի չափով,
- Հաշմանդամության 3-րդ խմբի ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 50%-ի չափով,
- Մահվան դեպքում՝ Ապահովագրական գումարի 100%-ի չափով:

5. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓԱԹԵԹՆԵՐ

	Ապահովագրական գումար /ՀՀ դրամ/	Տարեկան ապահովագրավճար /ՀՀ դրամ/		
		Ռիսկային խումբ 1	Ռիսկային խումբ 2	Ռիսկային խումբ 3
Տարբերակ 1	500,000	6,000	8,000	9,000
Տարբերակ 2	750,000	10,000	12,000	13,500
Տարբերակ 3	1,000,000	13,000	15,500	18,000

6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել՝

- 1 տարի ժամկետով
- մինչև 1 տարի ժամկետով

Ապահովագրության պայմանագիրը 1 տարուց պակաս ժամկետով կնքելու դեպքում կիրառվում են հետևյալ կարգավորող գործակիցները

մինչև 30 օր	20%
31-60 օր	30%
61-90 օր	40%
91-120 օր	50%
121-150 օր	60%
151-180 օր	70%
181-210 օր	75%
211-240 օր	80%
241-270 օր	85%
271-300 օր	90%
301-330 օր	95%
331-366 օր	100%



7. ՄԱՐԶԱԶԵՎԵՐ

<p>Ռիսկային խումբ 1</p>	<p>Բազկամարտ, Բադմինտոն, Վազք և քայլք, Բիաթլոն, Բիլիարդ, Ջրային պոլո, Գեղարվեստական մարմնամարզություն, Դարթս, Բոքսինգ, Կինոլողիկական սպորտ, Դահուկավազք, Լող, Ռադիոսպորտ, Չինոսական սպորտ, Սինկրոն լող, Սքվոշ, Սպորտային կողմնորոշում, Պարեր, Թենիս, Սեղանի թենիս, Ֆիթնես աերոբիկա, Սուսերամարտ, Շախմատ, Շաշկի, Էսթետիկ մարմնամարզություն</p>
<p>Ռիսկային խումբ 2</p>	<p>Թիավարություն, Ակրոբատիկ ողջնող, Բասկետբոլ, Բեյսբոլ, Հեծանվասպորտ, Ջրադահուկային սպորտ, Վոլեյբոլ, Հանդբոլ, Թեթև աթլետիկա, Առագաստանավային սպորտ, Լեռնադահուկային սպորտ, Սքեյթբորդինգ, Եռամարտ, Ժամանակակից հնգամարտ, Ծանր աթլետիկա, Դահուկային երկամարտ, Ջրացատք, Բատուտի վրա ցատկ, Սոֆթբոլ, Սպորտային տուրիզմ</p>
<p>Ռիսկային խումբ 3</p>	<p>Ավիացիոն սպորտ, Ավտոսպորտ, Ալպինիզմ, Սպորտային մարմնամարզություն, Բոբսլեյ, Բոնցքամարտ, Ծանրամարտ, Գոտեմարտ, Ազատ ոճի ըմբշամարտ, Հունահռոմեական ոճի ըմբշամարտ, Չյուդո, Կարատե, Կոմպլեքս մենամարտ, Ձիասպորտ, Մոտոցիկլային սպորտ, Ռաֆթինգ, Ռագբի, Սամբո, Սնոուբորդ, Սումո, Թեքվոնդո, Ուշու, Գեղասահք, Ֆուտբոլ, Ամերիկյան ֆուտբոլ, Հոկկեյ, Փեյսթբոլ, Քարթինգ, Ստորջրյա սպորտ, Նետաձգություն, Հրաձգություն</p>

8. ԾՐԱԳՐԻ ԸՆԶԵՌԱԾ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«NAIRI SPORT»-ը տալիս է հնարավորություն ունենալու՝

- ✓ Պաշտպանություն ցանկացած սպորտաձևով զբաղվելու ժամանակ
- ✓ Պաշտպանությունն արտերկրում անցկացվող մրցումների ժամանակ

**Օրագիրը կարգավորվում է Ընկերության «Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ»-ով:*

***Սույն ծրագիրը նախատեսված է 20 և ավելի անձանց համար:*